ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/184

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Արքասիմ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցում, ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.07.2021թ.-ի թիվ 26/26/11099-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ-ի 07.07.2021թ.-ի գրության հիման վրա, 08.07.2021թ.-ին «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 08.07.2021թ.-ին:

08.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/184 համարի ծածկագիրը:

15.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. **<u>«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը 22.06.2021թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի շրջանակներում ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00199063): Ընթացակարգը կազմակերպվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին հասպատվել են ֆինանսական միջոցներ, որոնք գերազանցել են 25 մլն. դրամը, ուստի ընտրված մասնակցից պահանջվել է որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով:

Սույն թվականի հուլիսի 18-ին պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ծանուցվել է «ԱԲՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ներկայացնել «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացնել հաստատված պայմանագրի նախագիծը որակավորման և պայմանագրի ապահովումները, սակայան սահմանված ժամկետում ընտրված մասնակիցը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արքասիմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Արքասիմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.07.2021թ.-ի թիվ 26/26/11099-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արքասիմ» ՍՊԸ-ն:

ii. «Արքասիմ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՊՄՀ-

ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iii. Հանձնաժողովի քարտուղարը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, 19.04.2021թ.-ին հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ ՊԵԿ) և խնդրել է տրամադրել «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա՝ 12.04.2021թ.-ի դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն:

iv. ՊԵԿ-ի կողմից 19.04.2021թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2 709 335 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում որոշ անվանումներ ընթեռնելի չեն:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 20.04.2021թ.-ին ժամը 11:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 21.04.2021թ.-ին Ընկերության simonynna93@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկվել թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում:

viii. Հանձնաժողովի 22.04.2021թ.-ի արտահերթ նիստի արձանագրության համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2 709 335 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 23.04.2021թ.-ին ժամը 15:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

x. Հանձնաժողովի քարտուղարի կողմից www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 22.04.2021թ.-ին Ընկերության simonynna93@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկվել թիվ 5 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում:

xi. 23.04.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

xii. Բողոքներ քննող անձը 18.05.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/11571-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել՝ www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Արքասիմ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են ծանուցումներ, թե՝ ոչ և եթե ծանուցումներն ուղարկվել են, ապա Ընկերության կողմից ծանուցումները ստացվել են, թե՝ ոչ:

xiii. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.05.2021թ.-ի թիվ Ն/26-1/11747-2021 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Արքա Սիմ» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած simonynna93@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 21.04.2021թ. ժամը 12:41-ին և 22.04.2021թ. ժամը 14:26-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ: Միաժամանակ հայտնել են նաև, որ 21.04.2021թ. ժամը 12:41-ին առաքված նամակը ուղեկցվել է վերոգրյալ էլեկտրոնային փոստի հասցեի կողմից չընդունված լինելու մասին «Mail Delivery System» հաղորդագրությամբ:

xiv. 03.06.2021թ.-ի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/36 որոշման համաձայն՝ դադարեցվում է «Արտշին-1» ՍՊԸ-ին ընտրված մասնակցի ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ.-ինիստի թիվ 1 որոշումը և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցել «Արքասիմ» ՍՊԸ-ին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

xv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.06.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է,

որ մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը և որոշել է ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Արքասիմ» ՍՊԸ-ին:

xvi. 10.06.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

xvii. Պատվիրատուն 18.06.2021թ.-ին Մասնակցի simonynna93@mail.ru էլ. փոստի հասցեին ներկայացնելով «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է պայմանագրի նախագիծը և առաջարկը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, պայմանագրի ստորագրված տարբերակները:

xviii. Հանձնաժողովի 06.07.2021թ.-ի նիստի թիվ 10 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագրի, պայմանագրի ու որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված «Արքասիմ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.07.2021թ.-ի թիվ 26/26/11099-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի

հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.04.2021թ.-ին հայտարարված «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցումին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արքասիմ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 09.06.2021թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

10.06.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր: Պատվիրատուն, 18.06.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը, խնդրել է տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, ինչպես նաև պայմանագրի ստորագրված տարբերակները կից գրությամբ:

06.07.2021թ.-ի նիստի թիվ 10 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագրի, ինչպես նաև պայմանագրի ու որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված «Արքասիմ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցումին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.07.2021թ.-ի թիվ 26/26/11099-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/184 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արքասիմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**